ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 4 հունիսի 2020թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Գևորգ Հովհաննիսյան
Անդամներ	Իգիթ Առաքելյան
	Հրանտիկ Մելիքյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք աղբատար ավտոմեքենայի համար գնման հայտով սահմանված նախահաշվային գինը, որը կազմում էր 31 000 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հասցե	Հեռախոս
«ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Արտաշատի խճղ. 2/4	060 60-00-11
«Գալոպեր» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Տիգրանյան 1, փակ. 1	010 28-61-99

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտերը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարներում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին,

3. մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

Գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատաս-խանությունը հրավերով սահմանված	Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատաս-խանությունը հրավերով	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի համապատաս-

	պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում)	սահմանված վավերապայմաններին (համապատասխանում է/չի համապատասխանում)	խանությունը հրավերի պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում)
«ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
«Գալոպեր» ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն էին.

ՀՀ դրամ

Մասնակից	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1՝ Աղբատար ավտոմեքենա			
«ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	24 583 333	4 916 667	29 500 000
«Գալոպեր» ՍՊԸ	23 750 000	4 750 000	28 500 000

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի

ա) ընտրված մասնակից ճանաչել «Գալոպեր» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

բ) երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Գալոպեր» ՍՊԸ-ի հետ կնքել աղբատար ավտոմեքենայի մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հանձնարարեց քարտուղարին հրավերով սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Գևորգ Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ _____ Իգիթ Առաքելյան

_____ Հրանտիկ Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան